

ցուած կատարեալագործեալ անգղիական և գերմանական արագա-
շարժ մեքենայից հետ. զորս անդադար գործունէութեան մէջ կը
պահէ շարժիչ գեղեցիկ գերմանական գործի մը, որ և փոխադարձ
իւր շարժման և զօրութեան անունդ կ'ընդունի յատուկ տպարանիս
համար ստացուած անգղիական կազածին մեքենայէ մը:

Տպարանի ամբողջութեան լրումն կու տայ ներկայիս մէջ նաև նո-
րագիւտ մեքենաներով կատարեալագործուած կազմատուն մը, իւր ըն-
տիր ճաշակաւ կազմած գրքերով:

Տպագրատանս յառաջադիմութեան հոգն, թէպէտ և յատկապէս
յանձնուած է միշտ վանական Հօր մը հսկողութեան, այլ վանքի վե-
րատեսուէ Արքահարց սեփական խնամոց և ուշադրութեան մերձաւոր
և սիրելի առարկայ եղած է. իսկ առաւելագոյն ևս եղանակաւ այս վե-
հագոյն խնամակալութեան պարտական է տպարանս իւր ներկային
մէջ. Միաբանութեանս վարչութիւնն ունեցել է միշտ և պիտի շարու-
նակէ նաև յապագային իւր հոգն ու մեծագոյն խնամքն, քաջ գիտե-
լով որ այս հաստատութեանս կենդանութեան և գործունէութեան
հետ՝ սերտ կապակցութիւն ունի՝ Մխիթարեան Միաբանութեան բա-
րոյական կեանքն և ազգային նշանակութիւնն:

Հ. ԱՌԱՅՍ ՏԻՐԱՅԵԱՆ

ՆԵՂՈՍ

ՇԱՐՎԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ ՑՄԱՆՔՍԱՆԳՐԻՒՄ

ՆԵՂՈՍ լրագոյն նպատակն պիտի լինի ազգային յառաջադիմութեան
համար իւրովսանն ծառայել եւ լինել յօդ եղբայրսիրութեան ընդ մէջ օ-
տար եւ եգիպտաբնակ Հայ գաղթականութեան:

ՆԵՂՈՍ լրագիրը պիտի հրատարակուի ամէն Զորեքշաբթի օրեր:

Պիտի պարունակէ ազգային կենաց վրայ տեսութիւն և տեղեկութիւն-
արտաքին եւ տեղական լուրեր. նոյնպէս զաւելտական, բանասիրական եւ
այլ օգտակար յօդուած եւ գրութիւն:

Խմբագրութիւնն իր լրագրոյն մէջ սիրով կը հիւրընկալէ ամէն տեսակ գը-
րութիւն, որ լինի ընտիր օգտակար եւ իւր նպատակին յարմար:

Լրագրոյն տարեկան բաժանորդագիրն է ամէն տեղի համար 10 ֆունդը.
վեցամսեայն 5 ֆունդը. միշտ կանխիկ վճարելի:

Հասցէն է. «Խմբագրութիւն Նեղոս Լրագրի, Ալեքսանդրիա (եգիպտոս):»